



## ԳԱՅԱՆՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության  
ամբիոնի ասիստենտ,  
տնտեսագիտության թեկնածու

## ՀՀ-ՈՒՄ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆԸ ՆՊԱՏՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունն աչքի է ընկնում բարձր սեյսմակտիվությամբ, ինչն իր հերթին նշանակում է երկրաշարժերի և աղետների տեղի ունենալու բարձր հավանականություն: Նման իրավիճակում պետությունը պետք է միշտ պատրաստ լինի աղետային ռիսկերի ճշգրիտ և ժամանակին կառավարմանը: Դա նշանակում է ռիսկի գնահատում, նվազեցում և կանխարգելում: Նման միջոցառումների իրականացմանը պետությունը պետք է թե՛ ֆինանսապես, թե՛ օրենսդրորեն մշտապես պատրաստ լինի:

Հողվածում բացահայտվել է, թե Հայաստանի Հանրապետությունը որքանով է պատրաստ աղետային ռիսկերի կառավարմանը կամ նման համակարգի մշակմանը և ներդրմանը: Հիմնախնդիրը դիտարկվել է ապահովագրության տեսանկյունից: Ճշտվել է, թե արդյոք ՀՀ-ում կան էկոլոգիական ռիսկերի ապահովագրության համակարգի ներդրմանը նպաստող գործոններ և պայմաններ: Այս առումով, ուսումնասիրվել են ոչ միայն էկոլոգիական ռիսկերի կառավարմանը և ապահովագրությանը վերաբերող օրենքները և օրենսդրական ակտերը, այլև այն ծրագրերն ու նախագծերը, որոնք նպաստում են նման համակարգի մշակմանը:

**Հիմնաբառեր`** սեյսմակտիվություն, աղետային ռիսկեր, էկոլոգիական ռիսկեր, կառավարում, ապահովագրություն

JEL: G22, Q56, Q57

Բնական աղետները բոլոր ժամանակներում էլ ահռելի վտանգ են ներկայացրել Երկիր մոլորակի և նրա բնակչության համար: Դրանցից, թերևս, երկրաշարժերն են հասցնում ամենախոշորածավալ ավերածությունները: Դիտելով UNESCO-ի մշակած «Գլոբալ սեյսմիկ վտանգների քարտեզը»՝ կտեսնենք, որ աշխարհի ցամաքային տարածքի կեսից ավելին գտնվում է սեյսմակտիվ գոտում, իսկ դրա գերակշիռ մասը՝ շատ բարձր վտանգի գոտում<sup>1</sup>: Նշված գոտում են Կանադան, Չիլին, Մեքսիկան, Թուրքիան, Ադրբեջանը, Վրաստանը, Իրանը, Ղազախստանը, Հնդկաստանը, Ճապոնիան, Ֆիլիպինները, Ինդոնեզիան, ինչպես նաև Հայաստանը:

Տեղակայված լինելով Ալպիի մալայան գոտում՝ Հայաստանի տարածքը գործնականում 100%-ով գտնվում է սեյսմակտիվ տարածաշրջանում: Համաձայն «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման» 1999 թ. ընդունված համալիր ծրագրի՝ ՀՀ-ում տարբեր աղետներից ավելի մեծ վնաս են հասցրել ուժեղ երկրաշարժերը, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր աղետների մեջ 94% է, մնացած մասը կազմել են սելավները՝ 3.15%, տրանսպորտային պատահարները՝ 1.5%, սողանքները և փլուզումները՝ 1.2%, ջրհեղեղները՝ 0.15%<sup>2</sup>: Նույն ծրագրի շրջանակներում ներկայացված են ՀՀ սեյսմիկ շրջանացման և սեյսմիկ ռիսկի քարտեզները, որոնց համաձայն առավել սեյսմավտանգ են Երևանը, Գյումրին, Վանաձորը, Կամոն, Իջևանը, Կապանը<sup>3</sup>: Երկրաշարժերի ուժգնությունը (M) հասնում է 7.1-ի (գործիքային ժամանակաշրջան) և  $\geq 7.5$ -ի, օջախների միջին խորությունը 10 կմ է, բոլոր օջախները տարածականորեն կապված են մինչև 1 սմ/տարի միջին տեղաշարժով ակտիվ խզվածքների հետ, ավերիչ երկրաշարժերի տևողությունն անբարենպաստ գրունտային պայմանների դեպքում կարող է հասնել մինչև 1 րոպեի,  $M \geq 5.5$  երկրաշարժերի կրկնման միջին պարբերականությունը 30–40 տարի է: Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի գնահատման և կառավարման պլանավորման ծրագրի»<sup>4</sup> ամբողջ երկրի տարածքում տեղի են ունեցել Սպիտակի հայտնի երկրաշարժը (1988 թ., որը 25,000 մարդու մահվան և 19,000 մարդու մարմնական վնասվածքների պատճառ դարձավ՝ լրջորեն ավերելով 517,000 բնակարան և երկրի հյուսիսային մասերին հասցնելով 15–20 միլիարդ ԱՄՆ դոլարի տնտեսական վնաս) և այլ երկրաշարժեր: Դրանցից խոշորագույններն են 1679 թ. հունիսի 4-ին Չառնիի երկրաշարժը ( $M=7.0$ ), որի ժամանակ զոհվել է 1228 մարդ, Երևան քաղաքի մոտ 1937 թ. հունվարի 7-ին  $M=5.2$  ուժգնությամբ երկրաշարժը: Այնուամենայնիվ, վերջին 300 տարիների ընթացքում Երևանում տեղի չի ունեցել մարդկային զոհերով աղետաբեր երկրաշարժ:

Երկրում հեղեղումները նույնպես լուրջ վնաս են հասցնում: Օրինակ՝ 2010 թ. հեղեղման հետևանքով 10 մլն ԱՄՆ դոլարի վնաս հասցվեց<sup>5</sup>: Հայաստանը ենթակա է նաև խոշոր արդյունաբերական և տրանսպորտային աղետների, ինչպիսիք են քիմիական և ճառագայթային աղետները: Այսպես՝ Մեծա-

<sup>1</sup> Տե՛ս <https://mitnse.files.wordpress.com/2011/09/globalseismichazardmap.pdf>

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության որոշումը «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին», N429, 1999 թ., <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7414>

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, կետ 5:

<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության ԱԻՆ փրկարար ծառայություն, «Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի գնահատման և կառավարման պլանավորման ծրագիր», Վերջնական հաշվետվություն, էջ 1, [http://open\\_jicareport.jica.go.jp/pdf/1000008242.pdf](http://open_jicareport.jica.go.jp/pdf/1000008242.pdf)

<sup>5</sup> Տե՛ս <http://pubdocs.worldbank.org/en/403411452899977644/ARM-NDRMP-Brochure.pdf>

մորի ատոմային էլեկտրակայանը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում և Երևանից, որտեղ բնակվում է երկրի բնակչության մեկ երրորդը, ընդամենը 28 կիլոմետր հեռավորության վրա է:

Ինչպես տեսնում ենք, էկոլոգիական ռիսկերի հետևանքը կարող է ավելորդ լինել Հայաստանի Հանրապետության համար՝ պատճառելով թե՛ մարդկային զոհեր, թե՛ կործանարար վտանգ հասցնելով ամբողջ տնտեսությանը: Նման ռիսկերի սխալ և ոչ ժամանակին կառավարումը կարող է հանգեցնել այնպիսի հետևանքների, որոնք հաղթահարելու համար բավական երկար ժամանակ կպահանջվի: Համապատասխան միջոցառումների ժամանակին մշակումը համարվում է էկոլոգիական ռիսկերի կառավարման նախապայման: Ռիսկերի նվազեցման միջոցառումներից մեկը ապահովագրությունն է:

Ներկայացնենք, թե ՀՀ-ում էկոլոգիական ռիսկերի կառավարումը և ապահովագրությունը ինչպիսի մակարդակում են:

**Օրենսդրական դաշտ:** Դեռևս 20 տարի առաջ 1999 թ., Հայաստանի Հանրապետության Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին» որոշումը,<sup>6</sup> որտեղ, որպես հիմնական նպատակ, սեյսմիկ վտանգի կանխատեսումն է, սեյսմիկ ռիսկի գնահատումը և դրա նվազեցումը: Սեյսմիկ ռիսկերի նվազեցման կետում, բացի մի շարք միջոցառումներից, ուշադրություն է դարձված ապահովագրությանը: Որոշման մեջ նշված է նաև, որ ծրագրի ընդունումը կնպաստի ապահովագրության զարգացմանը՝ շեշտադրելով երկրաշարժերի դեպքում ապահովագրության համակարգի հիմքի ստեղծման անհրաժեշտությունը գործող օրենսդրական ակտերի կատարելագործման և նոր օրենքների, օրենսդրական ու նորմատիվ ակտերի մշակման, տեղեկատվության բազայի և ապահովագրության վերահսկման կազմակերպման, բաժնետիրական ապահովագրական ընկերությունների գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով: Որպես ծրագրի գործարկման արդյունք՝ նախատեսվում է աղետներից ապահովագրության կառուցվածքի ստեղծում, որի ժամկետային մանրամասները ներկայացված են նույն ծրագրի կատարման ժամանակացույցում: Ծրագրի ընդունումից մոտ 20 տարի է անցել, սակայն ՀՀ-ում աղետներից ապահովագրության լիարժեք համակարգ այդպես էլ չի ստեղծվել:

2001 թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգի և ապահովագրական շուկայի զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշումը<sup>7</sup>, որտեղ, որպես գերակայություն, այլ ուղղությունների հետ մեկտեղ սահմանվել է նաև մեծ և առավել վտանգավոր ռիսկերից (հրդեհ, բնական աղետներ, սեյսմիկ, ատոմային և էկոլոգիական ռիսկեր) ապահովագրական պաշտպանության համակարգի ձևավորումը: Որոշումն ընդգրկում էր նաև էկոլոգիական և սեյսմիկ ռիսկերի ապահովագրության ներդրումը: Որոշման ընդունումից արդեն անցել է 17 տարի, սակայն էկո-

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության որոշումը «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի մասին», N429, 1999 թ., Եր., <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7414>

<sup>7</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգի և ապահովագրական շուկայի զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագրի մասին», N 335, 21 ապրիլի, 2001 թ., <http://www.irtek.am /views/act.aspx?aid=13270>

լոգիական ռիսկերի պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման վերաբերյալ գործնական միջոցառումներ այդպես էլ չեն անցկացվել:

Տեղին է նշել, որ 2008 թ. Համաշխարհային բանկի (ՀԲ) բարձրաստիճան պատվիրակության Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի կայուն զարգացման վարչության տնօրեն Փիթեր Թոմսոնը կարևորել է ՀՀ-ում աղետների ապահովագրության համակարգի ներդրումը: Նա նշել է. «...բացի ներդրումային ծրագրերից, ՀԲ-ն կարող է նաև աջակցություն ցուցաբերել հետագայում տարածաշրջանային ապահովագրական համակարգի ստեղծման ուղղությամբ: Այստեղ ևս ՀԲ-ն կցուցաբերի համընդգրկուն մոտեցում. ապահովագրական սխեմաներ կմշակվեն, օրինակ, որոշակի բնական աղետներից (ջրհեղեղ, կարկուտ) տուժած մշակաբույսերի, բերքի համար: Մյուս ուղղությունը, որը ներառված է ՀԲ աշխատանքներում, շենքերի ամրացումն է և շինարարական չափորոշիչների մշակումը, որը հնարավորություն է տալիս մեղմելու երկրաշարժի հետևանքները»<sup>8</sup>:

2011 թ. «Էկոլոգիական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծի հայեցակարգային մոտեցումներին հավանություն տալու մասին փաստաթղթի հավելվածում<sup>9</sup> նշվում է, որ Հայաստանում, բացի մի շարք հիմնահարցերից, չկարգավորված է մնում էկոլոգիական ապահովագրության հիմնախնդիրը: Շրջակա միջավայրի պահպանման արդյունավետ մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ ֆինանսական և տնտեսական գործիքների շարքում շեշտադրվում է բնապահպանական ապահովագրությունը, իսկ օրենքի մշակման հիմնական ուղղությունների մեջ առանձնացվում է նաև բնապահպանական ռիսկերի ապահովագրման անհրաժեշտության սահմանումը: 2019 թ. դրությամբ օրենքը դեռևս նախագծի կարգավիճակում է, իսկ ապահովագրության վերաբերյալ կետեր ներկայացված չեն<sup>10</sup>:

2014 թ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի<sup>11</sup> 6-րդ հոդվածի առաջին կետում նշված է, որ գնահատման նպատակն է շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, **նվազեցումը** կամ բացառումը: Սակայն, որպես նպատակ սահմանելով նվազեցումը, օրենքը ոչինչ չի նշում, օրինակ՝ էկոլոգիական ռիսկերի ապահովագրության՝ որպես ռիսկի նվազեցման առաջնային և հիմնական գործիքի մասին:

Անդրադառնանք ապահովագրության ոլորտում էկոլոգիական ռիսկերի կարգավորման օրենսդրական դաշտին: Ապահովագրությունը ՀՀ-ում կարգավորվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թ. ընդունված օրենքին համապատասխան: Որպես այդպիսին՝ ապահովագրության առանձին տեսակների վերաբերյալ առանձին օրենքներ կամ օրենսդրական ակտեր մշակված չեն, բացառությամբ ԱՊՊԱ պարտադիր ապահովագրատեսակի: «Ապահովագրության և ապահովագրական գոր-

<sup>8</sup> <https://armenpress.am/arm/print/505552/>

<sup>9</sup> Տե՛ս «Էկոլոգիական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հայեցակարգային մոտեցումներին հավանություն տալու մասին», Հավելված ՀՀ Կառավարության 2011 թ. արձանագրային որոշման, 8 էջ, [www.gov.am/tiny\\_forms/gnf.php?f=TZV-24-04-01.doc](http://www.gov.am/tiny_forms/gnf.php?f=TZV-24-04-01.doc)

<sup>10</sup> Տե՛ս <https://www.e-draft.am/projects/264/about>

<sup>11</sup> Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91594>

ծունեության մասին» 2007 թ. ընդունված օրենքի 7-րդ հոդվածում պարզապես առանձնացված է «Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն» դասը: Բացակայում է նաև առանձին խոշոր ապահովագրության դասերի գծով նորմատիվների (ընդհանուր կապիտալի նվազագույն չափ, երբ ընկերությունն իր վրա է վերցնում անհամեմատ խոշոր ռիսկ, մեկ ստանձնած ռիսկի առավելագույն չափի նորմատիվ և այլն) սահմանումը, ինչը ևս նվազեցնում է խոշոր բնական աղետների ապահովագրության հնարավորությունները: Փաստորեն, ՀՀ ապահովագրական օրենսդրական դաշտը էկոլոգիական ռիսկերի կարգավորման առումով լիարժեք չէ:

**Հետազոտություններ և վերլուծություններ:** Էկոլոգիական ռիսկերի ապահովագրության վերաբերյալ քիչ չեն նաև վերլուծությունները և հետազոտությունները: Մասնավորապես՝ «Կլիմայի փոփոխության և առողջապահության ՀՀ ազգային քաղաքականության վերլուծություն» 2016 թ. նախագծում<sup>12</sup> առաջարկվում է էկոլոգիական ռիսկերը կառավարել երկու եղանակով՝ 1. էկոհամակարգային ծառայությունների հետ կապված տնտեսական գործիքներով, 2. այլ նորարարական ֆինանսատնտեսական գործիքներով: Վերջինների թվում առաջարկվում է ներառել էկոլոգիական ապահովագրությունը, էկոլոգիական աուդիտը, ինչպես նաև հարկային և բանկային արտոնությունները, որոնք ևս դիտարկվում են նորարարական ֆինանսատնտեսական մեխանիզմների համակարգում: Բացի այդ, միջազգային պրակտիկայում հաջողությամբ կիրառվում են տարբեր գործիքների հիբրիդներ (օրինակ՝ էկոլոգիական ապահովագրության պոլիսի առկայության դեպքում տնտեսավարողներին հարկային կամ բանկային արտոնությունների տրամադրում):

«Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությանը և դրա իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին»<sup>13</sup> 2017 թ. նախագծի 5-ի գլխի 18-րդ կետում նշվում է, որ աղետներից ապահովագրական համակարգի գործունեությունը արդյունավետ չէ, ինչը թուլացնում է աղետների ռիսկի կառավարման ֆինանսական գործընթացների ձկունությունը՝ հիմնական ծանրաբեռնվածությունը թողնելով պետական և համայնքային բյուջեների վրա, հանգեցնում է ֆինանսական կարողությունների նվազեցմանը և բնակչության ու տարածքների խոցելիության մեծացմանը: Նախագծում առաջարկվում է աղետներից ապահովագրման արդիական համակարգի ներդրումը՝ որպես ծրագրի կատարողներ սահմանելով ՀՀ ԱԻՆ-ը, տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը, գյուղատնտեսության նախարարությանը, ֆինանսների նախարարությանը, ՀԲ-ին (համաձայնությամբ), միջազգային կազմակերպություններին (համաձայնությամբ), ապահովագրական ընկերություններին (համաձայնությամբ), կատարման ժամկետը սահմանվել է մինչև 2020 թ., իսկ ֆինանսական ապահովումը իրականացվելու է միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից:

**Ծրագրեր:** Հայաստանի Հանրապետությունը էկոլոգիական ռիսկերի կառավարման նպատակով ֆինանսավորում է ստանում միջազգային կառույցներից: Դրանցից մեկը Համաշխարհային բանկի կողմից մեր երկրին 2015 թ. տրված ֆինանսավորումն էր: Ծրագրի տևողությունը 2.5 տարի էր, ֆինանսավորումը՝ 1.75 մլն դոլար: Հիմնական գործընկերներն են ՀՀ տարածքային

<sup>12</sup> Տես «Կլիմայի փոփոխության և առողջապահության ՀՀ ազգային քաղաքականության վերլուծություն» նախագիծը, 2016 թ., <http://aarhus.am/Announcements/verlutsutyun.pdf>

<sup>13</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?aid=89604>

կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը, քաղաքաշինության նախարարությունը, կրթության և գիտության նախարարությունը, ֆինանսների նախարարությունը, համապատասխան պետական մարմինները, Երևանի քաղաքապետարանը և այլ մարզեր ու համայնքներ: Ցանկալի կլիներ, որ ծրագրին որպես գործընկեր մասնակցեր նաև ԿԲ-ն: Վերջինիս միջոցով հնարավորություն կընձեռվեր կյանքի կոչելու ապահովագրության բնագավառում արդեն 20 տարի շոշափվող՝ աղետներից ապահովագրության կառուցվածքի ստեղծման նախագիծը:

Ինչ վերաբերում է աղետային ռիսկերի ֆինանսավորմանը, ապա «Քաղաքացիական պաշտպանության մասին» 2002 թ. ընդունված ՀՀ օրենքի<sup>14</sup> 8-րդ գլխի 22-րդ հոդվածի համաձայն՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները քաղաքացիական պաշտպանության միջոցառումների նյութատեխնիկական ապահովումն ու ֆինանսավորումն իրականացնում են, համապատասխանաբար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների միջոցների հաշվին: «Պետական բյուջեի մասին» 2018 թ. ՀՀ օրենքի<sup>15</sup> մեջ ծախսային հոդվածներում, մասնավորապես՝ «Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» հոդվածում առանձնացված է միայն փրկարար ծառայությունների բաժինը և ոչ մի մանրամասնում չկա աղետների առաջացման դեպքում փոխհատուցումների մասին: Արտակարգ իրավիճակների նախարարության 2018 թ. բյուջեում նշված է «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» տողը, որի մեջ ներառվում է «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» կետը, որը կրկին չի մանրամասնում աղետների առաջացման դեպքում փոխհատուցումը: Մինչդեռ, օրինակ՝ Ճապոնիայի պետական բյուջեում որոշակի հոդվածով հստակ առանձնացված են «Աղետներից վերականգնման, աղետների կանխարգելման և նվազեցման ծրագրերը» իրենց համապատասխան ենթակետերով<sup>16</sup>: Բացի այդ, երկրաշարժերի առաջացման վտանգավոր գոտիներում գտնվող մի շարք երկրների պետական բյուջեներում առանձնացված է սեյսմիկ ռիսկերի ֆինանսավորման բաժինը: Մասնավորապես՝ Կանադայում, համաձայն «2017 թ. պետական բյուջեի պլանի», առանձնացված է «Կանաչ ենթակառուցվածք» բաժինը, որում ընդգրկված է «Աղետների նվազեցման» մասին հոդվածը: Նախատեսված է այդ ուղղությամբ հատկացնել 45 մլն դոլար 2018–2019 թթ. համար, իսկ 2021–2022 թթ. հասցնել 200 մլն դոլարի: Մինչդեռ, օրինակ՝ Ադրբեջանի 2017 թ. պետական բյուջեի ծախսային հոդվածներում չկա նշում աղետների ռիսկերի ֆինանսավորման վերաբերյալ,<sup>17</sup> չնայած այն հանգամանքին, որ Ադրբեջանը ևս գտնվում է վտանգավոր սեյսմակտիվ գոտում:

«Քաղաքացիական պաշտպանության մասին» 2002 թ. ընդունված ՀՀ օրենքի 6-րդ գլխի 16 հոդվածի բ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրավունք ունեն ստանալու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման հետևանքով կրած վնասների

<sup>14</sup> Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=51923>

<sup>15</sup> Տե՛ս ՀՀ օրենքը «Պետական բյուջեի մասին», 2018 թ., էջ 3, <https://www.e-draft.am/projects/447/about>

<sup>16</sup> Տե՛ս <https://www.mof.go.jp/english/budget/budget/fy2017/03.pdf>

<sup>17</sup> Տե՛ս [http://cesd.az/new/wp-content/uploads/2016/11/CESD-Assessment\\_Azerbaijani\\_State-Budget-2017.pdf](http://cesd.az/new/wp-content/uploads/2016/11/CESD-Assessment_Azerbaijani_State-Budget-2017.pdf)

փոխհատուցում<sup>18</sup>, սակայն կարգը մանրամասնած չէ, ինչն էլ հողվածի կետը դարձնում է անհասկանալի:

Աղետային ռիսկերի ֆինանսավորման մի մասը կատարվում է ապահովագրության մեխանիզմի միջոցով: Սակայն հրդեհներից և աղետներից ապահովագրությունը 2017 թ. կազմել է Երկրի ապահովագրական բիզնեսի՝ ստացված ապահովագրավճարների միայն 8%-ը՝ հանգեցնելով աղետների ռիսկի փոխանցման մեխանիզմների շատ սահմանափակ օգտագործման:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարող ենք եզրակացնել.

1. Էկոլոգիական ռիսկերի ապահովագրության վերաբերյալ մեխանիզմների ներդրումը ՀՀ-ում առաջնահերթ նպատակներից է եղել դեռևս 1990-ական թվականներից: Էկոլոգիական ռիսկերի ապահովագրության կառուցվածքի ստեղծման առաջնահերթությունն ունի օրենքի ուժ, սակայն գործնական բնույթի միջոցառումներ այդպես էլ մինչ այժմ չեն իրականացվել:
2. Էկոլոգիական ռիսկերի ապահովագրության որոշ սխեմաներ միայն նախագծի կարգավիճակում են:
3. Էկոլոգիական ռիսկերի պատճառով առաջացած հնարավոր հետևանքների վերացման ֆինանսավորումը հստակ ձևակերպված չէ ո՛չ օրենսդրորեն, ո՛չ պետական բյուջեում՝ որոշակի հողվածով:
4. Էկոլոգիական ռիսկերի նվազեցման ծրագրերում ապահովագրական ընկերությունները առանձնացված չեն որպես առաջնային կատարողներ:
5. Էկոլոգիական ռիսկերի հետևանքների վերացման ֆինանսավորման գործընթացում ապահովագրական ընկերությունների մասնաբաժինը չնչին է, բացի այդ, կարգավորված չէ էկոլոգիական ռիսկերի ապահովագրության գործընթացը առանձին օրենքով կամ օրենսդրական ակտերով:

Փաստորեն, ապահովագրական ընկերությունները էկոլոգիական ռիսկերի ֆինանսավորման գործընթացում, ինչպես նաև ֆինանսավորման տարաբնույթ ծրագրերում ընդգրկված են, շեշտադրված է նաև ապահովագրության առաջնահերթությունը օրենսդրորեն: Այսպիսով՝ ՀՀ-ում էկոլոգիական ռիսկերի ապահովագրության մեծածավալ կառուցվածքի ստեղծման բոլոր նախադրյալները կան:

### Օգտագործված գրականություն

1. ՀՀ Կառավարության որոշումը «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի» մասին, N429, 1999 թ., Եր., <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7414>
2. Հայաստանի Հանրապետության ԱԻՆ փրկարար ծառայություն, «Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ ռիսկի գնահատման և կառավարման պլանավորման» ծրագիր, Վերջնական հաշվետվություն. [http://open\\_jicareport.jica.go.jp/pdf/1000008242.pdf](http://open_jicareport.jica.go.jp/pdf/1000008242.pdf)
3. ՀՀ Կառավարության որոշումը «ՀՀ տարածքում սեյսմիկ ռիսկի նվազեցման համալիր ծրագրի» մասին, N429, 1999 թ., <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=7414>
4. Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշումը «Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգի և

<sup>18</sup> Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=51923>

- ապահովագրական շուկայի զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագրի մասին», N 335, 21 ապրիլի 2001. <http://www.irtek.am /views/act.aspx?aid=13270>
5. «Էկոլոգիական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հայեցակարգային մոտեցումներին հավանություն տալու մասին», Հավելված ՀՀ Կառավարության 2011 թ. արձանագրային որոշման. [www.gov.am/tiny\\_forms/gnf.php?f=TZV-24-04-01.doc](http://www.gov.am/tiny_forms/gnf.php?f=TZV-24-04-01.doc)
  6. «Կլիմայի փոփոխության և առողջապահության ՀՀ ազգային քաղաքականության վերլուծություն» նախագիծ, 2016. <http://aarhus.am /Announcements/verlutsutyun.pdf>
  7. <http://www.irtek.am/views/act.aspx?aid=89604>
  8. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=51923>
  9. ՀՀ օրենքը «Պետական բյուջեի մասին», 2018. <https://www.e-draft.am/projects /447/about>
  10. <https://www.mof.go.jp/english/budget/budget/fy2017/03.pdf>
  11. [http://cesd.az/new/wp-content/uploads/2016/11/CESD-Assessment\\_Azerbaijani\\_State-Budget-2017.pdf](http://cesd.az/new/wp-content/uploads/2016/11/CESD-Assessment_Azerbaijani_State-Budget-2017.pdf)
  12. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=51923>
  13. <https://www.e-draft.am/projects/264/about>
  14. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=91594>
  15. <https://armenpress.am/arm/print/505552/>
  16. <http://pubdocs.worldbank.org/en/403411452899977644/ARM-NDRMP-Brochure.pdf>
  17. <https://mitnse.files.wordpress.com/2011/09/globalseismichazardmap.pdf>



**ГАЯНЕ АРУТЮНЯН**

Ассистент кафедры банковского дела и страхования АГЭУ, кандидат экономических наук

***Анализ условий, способствующих внедрению системы страхования экологических рисков в РА.–***

Республика Армения отличается высокой сейсмической активностью, что, в свою очередь, означает высокую вероятность землетрясений и бедствий. В такой ситуации государство всегда должно быть готово к точному и своевременному управлению рисками бедствий. Последнее означает оценку, снижение и предотвращение риска. Для принятия таких мер государство должно быть финансово и юридически готово к противостоянию.

В статье раскрывается, насколько Республика Армения готова управлять рисками стихийных бедствий или разработкой и внедрением такой системы. Проблема рассмотрена с точки зрения страхования как основного средства снижения или предотвращения риска. Выявлено, есть ли факторы и условия, способствующие внедрению в Армении системы страхования экологических рисков. С этой точки зрения изучены не только законы и правила экологического управления рисками и страхования, но и программы и проекты, способствующие развитию такой системы.

**Ключевые слова:** *сейсмичность, риск бедствий, экологические риски, управление, страхование.*

JEL: G22, Q56, Q57

**GAYANE HARUTYUNYAN**

Assistant at the Chair of Banking and Insurance at ASUE, PhD in Economics

***Analysis of the Conditions Contributing to the Introduction of an Environmental Risk Insurance System in the RA.–***

The Republic of Armenia is characterized by high seismic activity, which, in turn, means a high probability of earthquakes and disasters. In a situation like this, the state should always be ready for accurate and timely management of disaster risks. The latter means an assessment, reduction and prevention of risk. In order to take such measures, the state must be financially and legally ready for any confrontation.

The article reveals how much the Republic of Armenia is ready to manage the risks of natural disasters or the development and implementation of such a system. The problem is considered from the point of view of insurance as the main means of reducing or preventing risks. It has been revealed whether there are factors and conditions that promote the introduction of an environmental risk insurance system in

Armenia. From this point of view, not only laws and regulations for environmental risk management and insurance have been studied, but also programs and projects that promote the development of such a system have been considered in the given paper.

**Key words:** *seismicity, disaster risk, environmental risks, management, insurance.*

JEL: G22, Q56, Q57